ԱԿԱՆՋԴ ԲԵՐ՝ ԱՍԵՄ...



ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ
(1922–1996)

Հայ ժամանակակից բանաստեղծ է: Ծնվել է Արաբկիրում (Արևմտյան Հայաստան), որը ծվարած է Եփրատի ափին գտնվող Ոսկե–գետակի մոտ: Հայրենադարձվել է և 1932 թ. ապրել Երևանում՝ Արաբկիր թաղամասում: Տպագրվել սկսել է 1935 թ.: «Առաջին սեր», «Աշխարհի առավոտը» ժողովածուներում արտահայտված է Մեծ հայրենական պատերազմի մասնակցի սերը հայրենիքի, հարազատ հողի, հայրենի բնության նկատմամբ:

Մոտ 40 բանաստեղծական ժողովածուների հեղինակ է: Գրել է նաև էսսեներ, հուշեր: Նրա ստեղծագործության թեմաներն են հայրենիքը, մարդը, նրա աշխատանքն ու հույզերը: